

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՅՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ ՈՐ Ի

ՅԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Մատենաշարին մէջ լոյս տեսնող այս հատորը կ'ամփոփէ Հանդէս Ամսօրեայ Հայագիտական թերթին շատ մը տարիներու ընթացքին հրատարակած ձեռագրական մանր ցուցակները, որոնք առանձին հատորով հրապարակուած չեն: Թիւով քսան այդ մանր ցուցակներուն մէկ հատորի մէջ համախմբուած մեծ գիւրութիւն կ'ընծայէ բանասէրներուն օգտագործելու զանոնք, քանի որ ներկայ հրատարակութեան առթիւ կազմուած է յատուկ անուններու աւագ կարեւորութիւն ունեցող ցանկը:

Աւելի քան երկուսուհեակ մը երկիրներու մէջ ցրուած 245 ձեռագիրներու նկարագրութիւնը պարունակող 480 էջոց այս ստուար հատորը իր գոյառութիւնը կը պարտի հանգուցեալ Հ. Համադասպ Ոսկեանին, որ յաջած էր նման հատորի մը հրատարակութեան գովելի գաղափարը: Այդ անխոնջ բանասէրին տարածած մահով ընդմիջուած աշխատանքը յանձն կ'առնէ շարունակել Հ. Օգոստինոս Սեփուլեան և յաջողութեամբ կ'աւարտէ, ուրախութիւն պատճառելով Հայագիտական նիւթերով պարապողներուն:

Այստեղ թերևս կ'արժէ նշանակել մի քանի ուշագրաւ վրիպակներ, որոնք չեն մտած զօրագրութիւններնու շարքին մէջ:

1.— էջ 1, «Սասանեան», պիտի ըլլար՝ Սանասարեան:

2.— էջ 2բ, վարէն տող 1. «ՌԾԲ», պիտի ըլլար՝ ՌՃԹ:

3.— Թիւ 48 ձեռագրի գրչութեան մասին տրուած տեղեկութիւնները հաստատ չեն թուիր: Մկրտիչ արեղան կ'ըսէ. «գրեցի զՔիւֆա ի Գանձասար»: ուրեմն իր գրչին կը պատկանին ժամանակագրական մանր տեղեկութիւնները և ոչ թէ՛ ամբողջ ձեռագրին ընդօրինակութիւնը:

4.— էջ 15բ, վարէն տող չորրորդ, «ծածագիր», պիտի ըլլար՝ Ծածկագիր:

5.— էջ 33ա, կը պակսի Ընծայական Ձօնի առաջին հատուածին ութե. բորդ տողը՝ Եւ Աստուծոյ ընծայ տուեալ:

6.— էջ 106ա, տող վերէն 25. «Մըշտածու», պիտի ըլլար՝ Մըշտածուի:

7.— էջ 134ա, «Կայիփոսիս Վանք», պիտի ըլլար՝ Կայիփոսի Վանք:

Կը կրկնենք մեր ուրախութիւնը այս հրատարակութեան առթիւ, որ կարևոր նպաստ մը կը բերէ մեր ձեռագրական թանկագին ժառանգութեան յաւազոյն ծանօթացման և օգտագործման:

ԾՈՎԱԿԱՆ